

ԱՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հաստատված է՝  
ԱրՊՀ գիտական խորհրդում  
Արձանագրություն \_\_\_\_\_  
Ստորագրություն  
« \_\_\_\_ » \_\_\_\_\_ 20\_\_թ.

Վավերացնում եմ՝  
Ռեկտոր \_\_\_\_\_  
Ա.Ա.Հ.  
\_\_\_\_\_  
« \_\_\_\_ » \_\_\_\_\_ 20\_\_թ.

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Մասնագիտություն՝ Մասնագիտական մանկավարժություն / 011401.00.6 /

Կրթական ծրագիր՝ Կենսաբանություն 011401.01.6

Որակավորում՝ մանկավարժության, կենսաբանության բակալավր

## Բովանդակությունը

1. Կրթական ծրագրի ընդհանուր բնութագիրը
2. Մասնագիտության նկարագրի ձևակերպումը
3. Նոր ծրագրի ներմուծման (կամ գոյություն ունեցող ծրագրի վերանայման) հիմնավորումը
4. Աշխատաշուկայի վերլուծություն
5. Մրցակցային դիրքը
6. Ծրագրի նպատակները և խնդիրները
7. Փորձուսուցման կազմակերպումը
8. Ծրագրի կրթական վերջնարդյունքները: Վերջնարդյունքների սահմանման պահանջները.
  - ՄԿԾ վերջնարդյունքների բաղադրիչները (մոդուլին համապատասխան)
  - Մասնագիտության կրթական ծրագրի վերջնարդյունքների քարտեզ (մոդուլին համապատասխան)
  - Կրթական ծրագրի վերջնարդյունքների քարտեզ
  - Կրթական ծրագրի վերջնարդյունքները (դասընթացի մասնագրին համապատասխան)

### *Հավելվածներ*

- Հավելված 1. ՄԿԾ-ի համապատասխանությունը ՈԱՇ-ին, մասնագիտության կրթության որակավորումների բնութագրին և մասնագիտության պետական կրթական չափորոշիչին
- Հավելված 2. ՄԿԾ-ի կրթական խնդիրների հարաբերությունը ծրագրի վերջնարդյունքներին
- Հավելված 3. Դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդների համապատասխանությունը ուսումնառության արդյունքներին
- Հավելված 4. ՄԿԾ-ում սահմանված վերջնարդյունքների ձեռքբերման համար անհրաժեշտ ռեսուրսների ցանկը
- Հավելված 5. Դասընթացների/մոդուլների մասնագրեր
- Հավելված 6. Ուսումնական պլան
- Հավելված 7. Փորձուսուցման ծրագիր
- Հավելված 8. Գործառնական պլան

## 1. Կրթական ծրագրի ընդհանուր բնութագիրը

1. Շնորհվող որակավորում՝ մանկավարժության, կենսաբանության բակալավր
2. Որակավորման աստիճանը՝ բակալավր
3. Ուսումնառության տևողությունը՝ 4 տարի (8 կիսամյակ)
4. Ուսումնառության ձևը՝ առկա
5. Կրեդիտ՝ 240 ԵԿՓՀ (տարեկան 60 ԵԿՓՀ հաշվարկով)
6. Ընդունելության նվազագույն պահանջ՝ միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթություն կամ միջին մասնագիտական կրթություն
7. Ավարտական աշխատանք՝ 20 կրեդիտ
8. Փորձուսուցում՝ 10 կրեդիտ
9. Կրթական ծրագրի պատասխանատու ամբիոն՝

Կենսաբանության և քիմիայի ամբիոն

## 10. Ծրագրի բնութագիրը

«Կենսաբանություն 011401.01.6» մասնագիտության բակալավրիատի կրթական ծրագիրը (այսուհետ՝ ՄԿԾ) մշակվել է ԱՀ կրթության որակավորումների ազգային շրջանակի (ՈԱՇ) բակալավրի որակավորման պետական կրթական չափորոշիչի համաձայն և ըստ այդմ՝ ԱրՊՀ առաքելությամբ սահմանված պահանջներին համապատասխան.

հիմքեր՝

1. *Լեոնային Ղարաբաղի Հանրապետության որակավորումների ազգային շրջանակը հաստատելու մասին ԼՂՀ Կառավարության որոշում N 944-Ն, 27 դեկտեմբերի, 2012թ.*
2. *ԱրՊՀ Ռազմավարական ծրագիր 2019-2023, ԱրՊՀ խորհրդի՝ 2019թ. մարտի 5-ի, N3 նիստի որոշում:*

«Կենսաբանություն» մասնագիտության կրթական ծրագիրը ԱրՊՀ առաքելության իրագործումն է: «Կենսաբանություն» ՄԿԾ-ը 4 տարի տևողությամբ բակալավրական ծրագիր է, որի նպատակն է պատրաստել մասնագիտական գիտելիքներով, հմտություններով ու կարողություններով օժտված կենսաբան, ով կարող է զբաղեցնել հետևյալ պաշտոնները՝

կենսաբանության ուսուցիչ, փոխտնօրեն, տնօրեն, կենսաբան՝ ԱՀ բնապահպանության և գյուղատնտեսության նախարարություններում:

«Կենսաբանություն» մասնագիտության կրթական ծրագրի նպատակն է ուսանողներին տալ այնպիսի իմացություն, որն անհրաժեշտ և բավարար կլինի աշխատաշուկայում մրցունակ առաջարկ ձևավորելու համար: Այս նպատակից ելնելով խնդիր է դրվել՝

- նկարագրել կենսաբանի ժամանակակից աշխատանքային պարտականությունները, որոնք ակնկալվում են գործատուների կողմից, ինչպես նաև նկարագրել կենսաբանի որակավորումների շրջանակը և բնութագրիչները,
- աշխատանքային պարտականությունների իրականացման համար նկարագրել մասնագետի այն կարողությունները, որոնք կապահովեն նման պարտականությունների իրականացումը,
- վերլուծել ՀՀ և ԱՊՀ երկրներում համանման մասնագետի պատրաստման կրթական ծրագրերի բովանդակությունը,
- սահմանել կրթական ծրագրի մոդուլների վերջնարդյունքները՝ հաշվի առնելով նաև շրջանավարտների և ուսանողների շրջանակներում կատարված հարցումների արդյունքները:

***Փորձուսուցման տեսակները և վայրը:*** «Կենսաբանություն» կրթական ծրագրում իրականացվում են փորձուսուցման հետևյալ տեսակները.

- **Ուսումնա - դաշտային (պլեներային)** փորձուսուցումը կազմակերպվում է բակալավրիատի 1-ին և 2-րդ կուրսերի ուսանողների համար, որի նպատակն է ամրապնդել ու զարգացնել ուսանողի մասնագիտական գիտելիքները, կարողությունները և հմտությունները: Իրականացվում են Արցախի տարածքում բուսական և կենդանական աշխարհի ուսումնասիրման նպատակով կազմակերպված երթուղիներ ու նմուշների հավաք:
- **ուսումնական**

➤ մանկավարժական (կիրառական)

➤ մանկավարժական (ամփոփիչ)

Ուսումնա - դաշտային և մանկավարժական փորձուսուցման ամբողջ ընթացքն արձանագրվում է ուսանողի օրագրում (տե՛ս **Հավելված 7**): Մանկավարժական փորձուսուցման ավարտին այն իրականացնող հաստատության պատասխանատու անձն օրագրում ներկայացնում է կարծիք և բնութագիր: Փորձուսուցումը գնահատվում է ստուգարքի (2 շաբաթ) և տարբերակված ստուգարքի (4 շաբաթ) ձևով:

«Կենսաբանություն» մասնագիտության ուսանողները մանկավարժական փորձուսուցումն անց են կացնում Ստեփանակերտի Ա. Ղուլյանի անվան թիվ 2, Հ. Թումանյանի անվան թիվ 9, Ավ. Իսահակյանի անվան 10 հիմնական դպրոցներում:

10. **Աշխատանքային հնարավորությունը:** Ծրագրի շրջանավարտները կարող են աշխատանքի անցնել բարձրագույն ուսումնական հաստատություններում, դպրոցներում, բնապահպանության և գյուղատնտեսության նախարարություններում՝ զբաղեցնելով հետևյալ պաշտոնները.

*Կրթական համակարգեր.*

➤ Կենսաբանության ուսուցիչ

➤ Փոխտնօրեն

➤ Տնօրեն

➤ Կենսաբան:

Հնարավոր աշխատավայրերն են՝ ԱՀ կրթության, բնապահպանության և գյուղատնտեսության նախարարությունները:

11. **Գնահատումը:** Գնահատման հիմնական սկզբունքը ուսանողակենտրոն մոտեցումն է:

Գնահատման համակարգը հիմնված է ուսանողի կողմից կրթական վերջնարդյունքի յուրացման արժևորման վրա: Գնահատման համակարգում կարևորվում են ուսանողների հմտությունները և կարողությունները՝ տեսությունը գործնականում օգտագործելու ունակությունը, պրակտիկ մտածողությունը, վերլուծական կարողությունները և ոչ ստանդարտ իրավիճակներում որոշումներ կայացնելու կարողությունը, սեփական դատողությունների և գնահատումների կատարումը:

ԱրՊՀ-ում ուսանողների գիտելիքների պարբերական ստուգման և գնահատման մեթոդաբանությունը հստակորեն սահմանված են<sup>1</sup>, գնահատման չափանիշների թափանցիկությունն ապահովված է. առկա է ձևավորող (քայլերով հաշվարկված) և ընդհանրացնող գնահատման հավասարակշռություն: Գնահատման համակարգի հիմնական նպատակներն են՝

ա) ուսումնական կիսամյակի ընթացքում գիտելիքների անընդհատ ստուգման և գնահատման օգնությամբ կազմակերպել ուսումնառության համաչափ աշխատանքային գործընթաց, խթանել ուսանողի ինքնուրույն աշխատանքը, ուսումնառության գործընթացում ներմուծել մրցակցության տարրեր և բարելավել դասահաճախումները,

բ) ընթացիկ քննությունների և ստուգումների իրականացման օգնությամբ ներմուծել գնահատման տարրեր՝ գնահատման արդյունքները դասախոսների և ուսանողների կողմից օգտագործելով որպես հետադարձ կապ՝ դասավանդման և ուսումնառության շարունակական բարելավման ու կատարողականի բարձրացման նպատակով, բարելավել դասընթացի

---

<sup>1</sup> Տե՛ս «Կրեդիտային համակարգով առկա ուսուցմամբ ուսումնական գործընթացի կազմակերպման կարգ», ԱրՊՀ գիտական խորհրդի 2014թ. հունիսի 19-ի N27-Լ որոշման հավելված, հոդված 6:

արդյունարար գնահատման հիմնավորվածությունն ու ու արժանահավատությունը գիտելիքների գնահատման գործընթացում հաշվի առնելով ուսումնառության տարբեր բաղադրիչները:

Գիտելիքների գնահատումը (ստուգումը) պարունակում է հետևյալ բաղադրիչները՝

ա) դասընթացին ուսանողի հաճախումների գնահատում դասահաճախումների հաշվառման օգնությամբ,

բ) դասընթացի լսարանային պարապմունքներին ուսանողի ակտիվության աստիճանի հաշվառում,

գ) դասընթացի (ուսումնական մոդուլի) ենթաբաժինների և ծրագրով նախատեսված անհատական առաջադրանքների կատարման ու յուրացման ընթացիկ ստուգում, գնահատում կիսամյակի ընթացքում (ընթացիկ քննություններ և ստուգումներ),

դ) ամբողջ դասընթացի կամ ուսումնական մոդուլի եզրափակիչ գնահատում քննաշրջանում, ինչը ենթադրում է դասընթացի կամ կրթական մոդուլի համար սահմանված կրթական վերջնարդյունքների ձեռքբերման մակարդակի գնահատում,

ե) ստուգման արդյունքների ինտեգրում՝ ուսումնական գործընթացին ուսանողի հաճախումների աստիճանի, դասընթացի լսարանային պարապմունքներին ուսանողի ակտիվության և ինքնուրույն աշխատանքների կատարման աստիճանի ընթացիկ և եզրափակիչ գնահատումների հիման վրա դասընթացի (կրթական մոդուլի) արդյունավետ գնահատականի ձևավորում:

Կրթական ծրագրի վերջնարդյունքների ձեռքբերման հավաստիությունը ապահովվում է՝ ըստ դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդների համապատասխանության (*տե՛ս Հավելված 3*):

**14. Ուեստրասային ապահովվածությունը:** Սույն ՄԿԾ-ի իրականացման համար առկա են համապատասխան պրոֆեսորադասախոսական անձնակազմ՝ կենսաբանական գիտությունների 2 դոկտոր, 3 պրոֆեսոր, 20 թեկնածու, այդ թվում՝ 15 դոցենտ (**տե՛ս Հավելված 4**):

Նյութատեխնիկական բազայում առկա են լսարանային պայմաններ, պրոյեկտորով կահավորված լսարաններ, դրամաշնորհային ծրագրի շրջանակներում կենսաբանության ամբիոնին կից լաբորատորիա արդի սարքավորումներով, մանրադիտակներ, համակարգչային կաբինետ, ինտերնետ կապի առկայություն, մասնագիտական գրականության առկայություն համալսարանի գրադարանում և ամբիոնում:

**Կրթության հետազա հնարավորությունները:** Սույն կրթական ծրագրի շրջանավարտները կարող են շարունակել իրենց հետազա կրթությունը մագիստրոսական ծրագրով, իսկ հետազայում՝ ասպիրանտուրայում՝ ըստ ԱՀ ՈԱՇ համապատասխան մակարդակի:

#### **Մասնագիտության նկարագրի ձևակերպումը**

Կենսաբանությունը բնական գիտություն է, որը ուսումնասիրում է կենդանի օրգանիզմները և կենսական գործընթացները: Այն հսկայական նշանակություն ունի յուրաքանչյուր մարդու կյանքում շնորհիվ իր բազմաթիվ կիրառությունների, որոնց թվում են առողջ ապրելակերպը, բժշկությունը, գյուղատնտեսությունը, բնապահպանությունը, դատափորձագիտությունը և մարդու կյանքին անմիջականորեն առնչվող բազմաթիվ այլ ոլորտներ: «Կենսաբանություն» առարկան սովորողներին հնարավորություն է տալիս հետազոտելու կենդանի օրգանիզմների կառուցվածքը, ֆունկցիաները, բազմացումը, աճն ու զարգացումը, տարածվածությունը, էվոլյուցիան և փոխազդեցությունն անկենդան աշխարհի հետ: «Կենսաբանություն» մասնագիտությունը հնարավորություն է տալիս ձեռք բերել անհրաժեշտ գիտելիքներ



և հմտություններ ու դառնալ տեխնոլոգիական աշխարհի պատասխանատու և ինքնավստահ քաղաքացիներ, ովքեր ունակ են գիտությանն առնչվող հարցերում ձևավորել սեփական փաստարկված դիրքորոշում:

«**Կենսաբանություն**» մասնագիտությամբ բակալավրի պատրաստման հիմնական կրթական ծրագրի մշակման համար անհրաժեշտ նորմատիվ փաստաթղթերն են.

➤ «Կրթության մասին» ԼՂՀ օրենքը.

➤ «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ԼՂՀ

օրենքը.

➤ «ԼՂՀ բարձրագույն կրթության համակարգում կրեդիտային համակարգի ներդրման մասին» ԼՂՀ Կառավարության 2008թ. մայիսի 6-ի N 338 որոշումը.

➤ «ԼՂՀ-ում կրթական ծրագրի իրականացման լիցենզավորման կարգերը, լիցենզիայի ձևերը հաստատելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2001թ. մարտի 6-ի N 52 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ԼՂՀ կառավարության 2011թ. հունիսի 21-ի N 410-Ն որոշումը.

➤ «ԼՂՀ կրթության որակավորումների շնորհման կարգը հաստատելու մասին» ԼՂՀ Կառավարության 2013թ. ապրիլի 25-ի N944-Ն որոշումը.

➤ «Նախկինում շնորհված որակավորումների համապատասխանեցման կարգը հաստատելու մասին» ԼՂՀ կառավարության 2013թ. սեպտեմբերի 25-ի N 656-Ն որոշումը.

➤ «ԱՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» ԱՀ կառավարության 2017թ. դեկտեմբերի 5-ի N235-Ն որոշումը.

➤ ԼՂՀ կրթության, գիտության և սպորտի նախարարի 2015 թվականի դեկտեմբերի 18-ի N277/Մ հրամանը.

➤ ԱրՊՀ կանոնադրությունը.

- ԱրՊՀ զարգացման ռազմավարական ծրագիրը /2019-2023թթ./.
- «ԱրՊՀ Բակալավրի կրթական կառուցվածքի և բովանդակության ծրագրի կարգը հաստատելու մասին» ԱրՊՀ գիտական խորհրդի 2019 թվականի հունիսի 28-ի N6-Լ որոշումը.
- «Մասնագիտության կրթական ծրագրի» ձևաչափը լրացնելու մեթոդական ցուցումները հաստատելու մասին ԱրՊՀ գիտական խորհրդի 2019 թվականի հունիսի 28-ի N5-Լ որոշումը.
- «Կենսաբանություն» մասնագիտության ուսումնական պլանը /2019-2023թթ./.
- «Կենսաբանություն» մասնագիտության ուսումնական պլանով նախատեսված մոդուլների առարկայական մասնագրերը:

### **Նոր ծրագրի ներմուծման**

#### **(կամ գոյություն ունեցող ծրագրի վերանայման) հիմնավորումը**

«Կենսաբանություն» ՄԿԾ-ն իրենից ներկայացնում է ծրագիր, որի նպատակն է Արցախի ուսումնական հաստատությունների համար պատրաստել բարձրորակ կադրեր, որոնք կտիրապետեն կենսաբանության ոլորտին առնչվող մասնագիտական գիտելիքներին և հմտություններին:

Սույն կրթական ծրագիրը կենսաբանության ոլորտում ունի կարևորագույն նշանակություն, համարվում է մասնագիտական առանցքային և որոշիչ ծրագիր, որը լիովին համապատասխանում է ինչպես ԱրՊՀ, այնպես էլ բնագիտական ֆակուլտետի բուն առաքելությանը և ռազմավարությանը, իսկ նպատակային և որակյալ կադրերի պատրաստումը նպաստում է բուհի և կենսաբանության և քիմիայի ամբիոնի վարկանիշի բարձրացմանը:

## Աշխատաշուկայի վերլուծություն

Աշխատաշուկայի պահանջներին առավել լավ ծանոթանալու և առկա կրթական ծրագրերը բարելավելու նպատակով կենսաբանության և քիմիայի ամբիոնի կողմից իրականացվել են բազմաթիվ միջոցառումներ՝ հարցումների, կլոր սեղան-քննարկումների, բանավեճերի տեսքով: Ամբիոնի կողմից նաև ուսումնասիրվել են «ԱրՊՀ շրջանավարտների վերաբերյալ գործատուների կարծիքի ուսումնասիրության հարցման արդյունքները», որոնց հիման վրա բացահայտվել է ընդհանուր առմամբ մանկավարժ, կենսաբան մասնագիտությամբ շրջանավարտների մասնագիտական պատրաստվածության աստիճանին վերաբերող հարցերը:

ԱրՊՀ կենսաբանության և քիմիայի ամբիոնի կողմից կազմակերպվել է կլոր սեղան-քննարկում, որի նպատակն էր վերհանել ժամանակակից կենսաբան մասնագետի նկատմամբ գործատուների կողմից ներկայացվող պահանջները: Միջոցառումը նպատակ ուներ ամբիոնի կողմից թողարկվող ապագա մանկավարժ, կենսաբանի պատրաստման նպատակով կազմված ուսումնական ծրագրերը համապատասխանեցնել գործատուների կողմից առաջադրվող պահանջներին: Քննարկումների արդյունքում եզրակացվեց, որ նորավարտ շրջանավարտին չպետք է բարձրակարգ որակական պահանջներ դնել, այլ կարևոր է, որ ուսանողներն ունենան հիմնարար բազային, տեսական գիտելիքներ, լեզուների իմացության բավարար մակարդակ, համակարգչային անհրաժեշտ գիտելիքներ և ինքնուրույն սովորելու բավարար հմտություններ, ինչի արդյունքում վերջիններս բավականին արագ ու հեշտ կկարողանան ինտեգրվել իրենց աշխատանքային գործընթացին: Ուսումնական գործընթացի արդյունավետության բարձրացման տեսանկյունից կարևորվում է նաև գործնական պարապմունքների արդյունավետ կազմակերպումը, ուսանողների մոտ փորձնական աշխատանք կատարելու հմտությունների զարգացումը և ստեղծագործական մտքի զարգացմանը նպաստելը:

## Մրցակցային դիրքը

«Կենսաբանություն» կրթական ծրագրով մասնագետներ ԱՀ-ում պատրաստվում են բացառապես Արցախի պետական համալսարանի բնագիտական ֆակուլտետում 1998 թվականից: Այսօրվա դրությամբ ԱրՊՀ-ում առկա են բոլոր պայմանները՝ մասնագիտական ամբիոնն իր գիտամանկավարժական կադրերով, լսարանները, ուսումնական դիդակտիկ և ցուցադրական այլ նյութերը, ուսումնական գրականություն՝ ինչպես էլեկտրոնային, այնպես էլ սովորական գրապահոցներում: Այստեղ կրթական պրոցեսն ունի անընդհատ զարգացման միտում: ՀՀ համապատասխան համալսարանների փորձի օգտագործումն ունի կողմնորոշիչ նշանակություն. ժամանակակից կրթական մոդելների ներդրման միջոցով հնարավոր է նպաստել կրթության որակի բարձրացմանը և ժամանակակից պահանջներին դրանց համապատասխանեցմանը: ՄԿԾ-ով նախատեսվում են նյութական և մարդկային ռեսուրսները, որոնք ներկա պահին ապահովում են մասնագիտության պատրաստման անխափան գործընթաց: ՄԿԾ կիրառելի է համարում դասախոսությունները, գործնական պարապմունքները, խմբային աշխատանքները, ուսանողի անհատական աշխատանքը, ուսանողական գիտական ընթերցումները, բանավիճային կլոր սեղանների կազմակերպումը: Գիտելիքի մատուցումը բավարար հիմքերի վրա է դրված ամբիոնում, քանի որ այդտեղ աշխատում են գիտության թեկնածուներ, դոցենտներ, դոկտորներ, փորձառու մասնագետներ: Որպեսզի մասնագիտությամբ ուսուցումը ավելի շատ բավարարի աշխատանքային շուկայի պահանջներին և ընկալելի լինի տնտեսության կողմից, կրթական ծրագրերի մշակմանը հնարավորինս ընդգրկել են գործատուներ, գործարար միջավայրի ներկայացուցիչներ, սույն ծրագրի շրջանակներում նախատեսված դասընթացների դասավանդողներ, մասնագիտության շրջանավարտներ և ուսանողներ: ՄԿԾ-ն հստակ նախանշում է շրջանավարտի կարողությունները, որոնք նախանշված են ՈԱՇ-ով:

## Ծրագրի նպատակները և խնդիրները

ԱրՊՀ կենսաբանության և քիմիայի ամբիոնի առաքելությունը համապատասխանում է կրթության ազգային համակարգի նպատակներին և խնդիրներին: «**Կենսաբանություն**» ՄԿԾ-ն համապատասխանում է ԱՀ կրթության ՈԱՇ-ի որակավորման բնութագրի և պետական կրթական չափորոշիչ պահանջներին, ինչպես նաև ԱրՊՀ առաքելությանը: «**Կենսաբանություն**» մասնագիտության կրթական ծրագիրը ԱրՊՀ առաքելության իրագործումն է: ԱրՊՀ առաքելության համաձայն՝ Արցախի բնակչության կյանքը ձևավորողն ու իմաստավորողն առաջին հերթին նրա կրթական համակարգն է: Համալսարանը կրթում է սերունդներ, որոնք կլինեն գիտելիքի վրա հիմնված աշխարհի մի մասը: Մենք մեր խնդիրների լուծումը տեսնում ենք այնպիսի սերունդ կրթելու մեջ, որը կունենա նորարար ու հետազոտող հայացք, ձգտում է սովորել և գալիքի ճանապարհը կանխատեսելի դարձնել:

«**Կենսաբանություն**» մասնագիտության բակալավրիատի կրթական ծրագրի նպատակն է.

- Պատրաստել ժամանակակից, խորը գիտելիքներով ու գործնական հմտություններով օժտված բարձրակարգ մասնագետներ
- Տրամադրել կենսաբանության բնագավառում ժամանակակից պահանջներին հարիր գիտելիքներ
- Զարգացնել կենսաբանական երևույթները վերլուծելու և եզրահանգումներ կատարելու հմտություններ:

### Ծրագրի խնդիրները.

***Խնդիր 1.*** Նպաստել ընդհանուր կրթական և բնագիտական առարկաների բնագավառում լայն շրջահայացք և մտածողության մշակույթ ունեցող բարձր կրթված անձի ձևավորմանը, ապագա աշխատավայրում հարմարվելու և կոլեկտիվում աշխատելու ունակության ձեռքբերմանը:

**Խնդիր 2.** Բացահայտել և զարգացնել կենսաբանական երևույթները վերլուծելու և եզրահանգումներ կատարելու հմտությունները, ճկուն մտածողությունը, հետազոտությունների արդյունքները ներկայացնելու կարողությունները:

**Խնդիր 3.** Ձևավորել աշխատաշուկայի և դրա մասնակիցների /դպրոցներ, բուհեր, բուժհիմնարկներ և այլն/ գործունեության կարգավորման հիմունքների վերաբերյալ գիտելիքները, ապահովել կենսաբանական ոլորտում վերլուծական աշխատանք կատարելու ունակությունը:

**Խնդիր 4.** Օժտել կենսաբանության վերաբերյալ գիտելիքներով, կարողություններով և հմտություններով:

### **Փորձուսուցման կազմակերպումը**

Ուսումնառության ընթացքում ուսանողների համար կազմակերպվում է ուսումնա - դաշտային, ուսումնական և մանկավարժական փորձուսուցումների գործընթացը:

Նշված փորձուսուցումներն ունեն իրենց անհրաժեշտ դերակատարումը ապագա կենսաբանի մասնագիտական գիտելիքների ամբողջականության ապահովման գործընթացում: Փորձուսուցումը ուսանողների վերապատրաստման կարևոր ավարտական փուլերից է: Փորձուսուցման խնդիրն է մասնագիտական գործունեության տեսակների յուրացումը, այսինքն. գիտելիքների և կարողությունների համակարգումը, ընդհանրացումը, ամրապնդումը, ընդհանուր և մասնագիտական հմտությունների ձևավորումը, պրակտիկ փորձի ձեռք բերումը /մասնագիտության շրջանակներում/:

Ուսումնա - դաշտային փորձուսուցումն անց է կացվում Արցախի տարածքում անտառներ, դաշտեր երթուղիներ իրականացնելով, բուսատեսակների և կենդանատեսակների նմուշների հավաքումով ու մշակումով: Բուսատեսակների և կենդանատեսակների որոշումն իրականացվում է որոշիչների օգնությամբ: Մասնագիտական փորձուսուցման նպատակն է զարգացնել և կատարելագործել ուսանողների նեղ մասնագիտական կարողությունները և հմտությունները:

**«Կենսաբանություն»** մասնագիտությամբ ուսումնական փորձուսուցումն իրականացվում է 7 – րդ կիսամյակում, ներառում է 2 շաբաթ, իսկ մանկավարժական փորձուսուցումն իրականացվում է 8-րդ կիսամյակում՝ 4 (կիրառական) + 4 (ամփոփիչ) շաբաթ:

Մանկավարժական փորձուսուցումն իրականացվում է Ստեփանակերտ քաղաքի թիվ 2, 9, 10 դպրոցներում: Ուսումնասիրելով դպրոցի ուսումնական գործունեությունը, ուսանողներն ակտիվ մասնակցություն են ունենում մանկավարժական փորձուսուցման իրականացման աշխատանքներին:

**Ծրագրի կրթական վերջնարդյունքները**  
**Մասնագիտության կրթական ծրագրի վերջնարդյունքները**

	<b>Ընդհանրական</b>		<b>Մասնագիտական</b>
Ը1	Կիրառելու մասնագիտական գործունեության շրջանակներում պետական /հայերեն/ և օտար /ռուսերեն և անգլերեն/ լեզուները: Բանավոր խոսքը տրամաբանորեն ճիշտ կառուցելու, ինչպես նաև գրավոր ճիշտ ձևակերպելու մտածողություն	Մ1	Իմանալու ընդհանուր կենսաբանության հիմնարար հասկացությունները, տեսությունները, մեթոդները
Ը2	Տիրապետելու ընդհանուր կրթական և բնագիտական առարկաների բնագավառում լայն շրջահայացք ունեցող անձի ձևավորմանը նպաստող հմտություններ	Մ2	Մեկնաբանելու կենդանի օրգանիզմների թագավորությունում ընդգրկված օրգանիզմների հիմնական տաքսոնների ներկայացուցիչների աշխարհագրական տարածվածության և էկոլոգիական առանձնահատկությունները
Ը3	Ներկայացնելու հետազոտությունների արդյունքները, պատրաստելու զեկույցներ, վարելու բանավեճեր	Մ3	Բացատրելու կենսաբանության ուսուցման ընթացքում տարբեր մեթոդների առանձնահատկությունները, ներկայացնելու դպրոցական դաստիարակության ոլորտում կենսաբանական գիտելիքների մատուցման սկզբունքները
Ը4	Իրականացնելու մանկավարժական գործունեություն, ինչպես նաև փորձարարական հետազոտությունների արդյունքների նախնական մշակում: Մասնագիտական ու անձնային աճը պլանավորելու կարողություններ	Մ4	Կենդանի օրգանիզմների ձևաբանական և անատոմիական կառուցվածքի վերաբերյալ տրամաբանական մտածողության զարգացման ու փորձնական աշխատանքների իրականացման հմտություններ



Ը5	Կիրառելու տեղեկատվական տեխնոլոգիաներն օգտագործելու և մասնագիտական տեղեկատվության հավաքագրման, մշակման, վերլուծության և պահպանման տեխնոլոգիան: Օգտվելու տեղեկատվության տարատեսակ աղբյուրներից /համացանցային ռեսուրսներ, էլեկտրոնային գրադարաններ, գիտական հոդվածներ և հաշվետվություններ/	Մ5	Կիրառելու կենդանի օրգանիզմների դասակարգման սկզբունքների իմացությունը, կենսաբանական ռեսուրսները, նրանց ներգրավումը մարդու գործունեության տարբեր ոլորտներում
Ը6	Իրականացնելու գիտահետազոտական գործունեություն, գիտական նյութի հավաքագրում, փորձերի մասնագիտական, դաշտային հետազոտություններ, փորձարարական և դաշտային հետազոտությունների արդյունքների նախնական մշակում:	Մ6	Նկարագրելու մարդու օրգանիզմի կառուցվածքի անատոմիական և ֆիզիոլոգիական յուրահատկությունները, հոմեոստազի ապահովման կարգավորման մեխանիզմները, բարձրագույն նյարդային գործունեության հիմքերը, հոգեկան գործընթացների և վիճակների մեխանիզմները:
Ը7	Կիրառելու մասնագիտական էթիկայի կանոններ, ապագա աշխատավայրում հարմարվելու և կոլեկտիվում աշխատելու ունակություն, կատարելու թիմային աշխատանք	Մ7	Մասնագիտության մեջ գիտական նորույթն ընկալելու և մեկնաբանելու կարողություն
Ը8	Արժևորելու ազգի և պետության հանդեպ անձնական պատասխանատվությունը, ազգային և համամարդկային արժեքների տարածումը, ժողովրդավարական սկզբունքների իրագործման հետամուտ լինելը	Մ8	Կազմակերպելու և իրականացնելու մասնագիտական մտածողության հենքով ինքնուրույն գործունեություն
		Մ9	Բացատրելու պրոկարիոտ և էուկարիոտ բջիջների կառուցվածքի, հյուսվածքների, նյութափոխանակության, վերարտադրման և տարբերակման օրինաչափությունները, ձևաբանական, կենսաքիմիական առանձնահատկությունները, օրգանիզմի բնական

			<p>ռեզիստենտության գործոնների, ադապտիվ իմունիտետի ռեակցիաներն ապահովող բջջային, գենետիկական և մոլեկուլային մեխանիզմներն ու մեթոդները</p>
		Մ10	<p>Ներկայացնելու բույսերի ֆիզիոլոգիական պրոցեսների մոլեկուլային մեխանիզմները, նյութափոխանակության կարգավորման սկզբունքները, ֆոտոսինթեզի, շնչառության, ջրափոխանակության, բույսերի աճի և զարգացման, անբարենպաստ պայմանների նկատմամբ բույսերի դիմացկունության մեխանիզմները</p>
		Մ11	<p>Լուսաբանելու կենսաբանական բազմազանության դերը՝ որպես կենդանի համակարգերի և ամբողջությամբ վերցված՝ կենսոլորտի կայունության առաջատար գործոնի, օրգանիզմի և միջավայրի միջև փոխադարձ կապերն ապահովող մեխանիզմները</p>
		Մ12	<p>Գնահատելու բնության պահպանության և ռացիոնալ բնօգտագործման բնագավառում կազմակերպչական գործունեության ծավալումը և շրջակա միջավայրի վրա ազդեցության դերը</p>
		Մ13	<p>Բացատրելու քիմիայի տարբեր բաժինների հիմնադրույթները: Կիրառելու ձեռք բերված գիտելիքները լաբորատոր և գործնական աշխատանքներում</p>
		Մ14	<p>Կիրառելու կենսաբանությանն առնչվող քանակական և որակական տվյալների հավաքագրման, մշակման, վերլուծման ու մեկնաբանման հմտություններ</p>

		Մ15	Կիրառելու մասնագիտական ոլորտում հոգեբանական, մանկավարժական, ներառական կրթական հմտություններ
		Մ16	Մասնագիտական ոլորտում երեխաներին առաջին բժշկական օգնություն ցուցաբերելու կարողություն





Ընդհանուր և անօրգանական քիմիա		+																			+			
Անալիտիկ քիմիա		+																			+			
Օրգանական քիմիա		+	+												+	+					+			
Ֆիզիկական քիմիա		+																			+			
Մակեր և ստորակարգ բույսեր					+				+	+					+									
Բարձրակարգ բույսեր 1				+		+			+	+					+									
Բարձրակարգ բույսեր 2				+		+			+	+					+	+								
Անողնաշարավորների կենդանաբանություն 1			+		+				+	+				+										
Անողնաշարավորների կենդանաբանություն 2				+		+			+	+				+										
Ողնաշարավորների կենդանաբանություն 1				+		+			+	+				+	+									
Ողնաշարավորների կենդանաբանություն 2						+			+	+				+	+									
Բջջի կենսաբանություն				+	+				+							+	+	+						
Մարդու կազմաբանություն				+					+						+		+							
Հյուսվածքաբանություն և զարգացման կենսաբանություն				+					+							+	+	+						
Կենսաքիմիա 1					+				+								+	+						
Կենսաքիմիա 2					+				+						+	+	+							
Մանրէաբանություն և վիրուսաբանություն				+					+	+				+		+		+						







Փորձուսուցում ուսումնական /2 շաբաթ/					+																				+		
Փորձուսուցում մանկավարժական (կիրառական) /4 շաբաթ/					+																					+	
Փորձուսուցում մանկավարժական (ամփոփիչ) /4 շաբաթ/					+																					+	
Ամփոփիչ ատեստավորում											+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	

**Կրթական ծրագրի վերջնարդյունքները (Դասընթացի մասնագրի համապատասխան)**

<b>Դասընթացի կոդ</b>	<b>Դասընթացի անվանումը</b>	<b>Վերջնարդյունքներ</b>
0516/B90	Հայոց լեզու և խոսքի մշակույթ 1	Ը 1, Ը 8
0516/B91	Հայոց լեզու և խոսքի մշակույթ 2	Ը 1, Ը 8
0309/B01	Հայոց պատմության հիմնահարցեր 1	Ը 2, Ը 8
0309/B02	Հայոց պատմության հիմնահարցեր 2	Ը 2, Ը 8
0518/B74	Անգլերեն լեզու 1	Ը 1, Ը 2
0518/B75	Անգլերեն լեզու 2	Ը 1, Ը 2
0517/B46	Ռուսերեն - 1	Ը 1, Ը 8
0517/B47	Ռուսերեն - 2	Ը 1, Ը 8
0103/B44	Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման հիմունքներ	Ը 2, Ը 5
0414/B50	Արտակարգ իրավիճակներ և քաղաքացիական պաշտպանության հիմունքներ	Ը 2, Ը 8

0105/B38	Էկոլոգիայի և բնապահպանության հիմունքներ	Ը 2, Ը 6
0310/B10	Փիլիսոփայության հիմունքներ	Ը 2, Ը 8
0414/B11	Ֆիզդաստիարակություն	
0208/B51	Տնտեսագիտության հիմունքներ	Ը 2, Ը 8
0311/B07	Իրավունքի հիմունքներ	Ը 2, Ը 8
0310/B11	Քաղաքագիտության հիմունքներ	Ը 2, Ը 8
0414/B35	Ռազմագիտության հիմունքներ	Ը 2, Ը 8
0310/B13	Տրամաբանության հիմունքներ	Ը 2, Ը 8
0310/B12	Կրոնագիտության հիմունքներ	Ը 1, Ը 8
0310/B08	Բարոյագիտության հիմունքներ	Ը 7, Ը 8
0309/B03	Մշակութաբանության հիմունքներ	Ը 2, Ը 8
0309/B26	Ազգագրության հիմունքներ	Ը 2, Ը 8
0102/B40	Բնագիտության ժամանակակից հայեցակարգեր	Ը 2, Ը 3
0413/B152	Հոգեբանություն	Մ 15, Ը 8
0413/B149	Մանկավարժություն 1	Մ 15, Ը 7
0413/B150	Մանկավարժություն 2	Մ 15, Ը 7
0413/B148	Ներառական կրթություն	Մ 15, Ը 7
0105/B71	1-ին բուժօգնություն և երեխաների առողջության պահպանման հիմունքներ	Մ 8, Մ 16, Ը 8
0105/B83	Կենսաբանական ռեսուրսներ	Մ 1, Մ 5, Ը 6

0105/B70	Տարիքային անատոմիա և ֆիզիոլոգիա	Մ 1, Մ 6, Մ 8, Ը 3
0105/B65	Մաթեմատիկա	Մ 14, Ը 2
0105/B32	Ֆիզիկա	Մ 14, Ը 2
0105/B60	Ընդհանուր և անօրգանական քիմիա	Մ 13, Ը 2
0105/B61	Անալիտիկ քիմիա	Մ 13, Ը 2
0105/B62	Օրգանական քիմիա	Մ 7, Մ 8, Մ 13, Ը 2, Ը 3
0105/B63	Ֆիզիկական քիմիա	Մ 13, Ը 2
0105/B01	Սնկեր և ստորակարգ բույսեր	Մ 1, Մ 2, Մ 4, Մ 7, Ը 4
0105/B02	Բարձրակարգ բույսեր 1	Մ 1, Մ 2, Մ 4, Ը 3, Ը 6
0105/B03	Բարձրակարգ բույսեր 2	Մ 1, Մ 2, Մ 4, Մ 7, Մ 8, Ը 3, Ը 6
0105/B04	Անողնաշարավորների կենդանաբանություն 1	Մ 1, Մ 2, Մ 5, Ը 2, Ը 4
0105/B05	Անողնաշարավորների կենդանաբանություն 2	Մ 1, Մ 2, Մ 4, Մ 7, Ը 3, Ը 6
0105/B06	Ողնաշարավորների կենդանաբանություն 1	Մ 1, Մ 2, Մ 4, Մ 5, Ը 3, Ը 6
0105/B07	Ողնաշարավորների կենդանաբանություն 2	Մ 1, Մ 2, Մ 4, Մ 5, Մ 7, Ը 6
0105/B08	Բջջի կենսաբանություն	Մ 1, Մ 7, Մ 8, Մ 9, Ը 3, Ը 4
0105/B09	Մարդու կազմաբանություն	Մ 1, Մ 6, Մ 8, Ը 3
0105/B10	Հյուսվածքաբանություն և զարգացման կենսաբանություն	Մ 1, Մ 7, Մ 8, Մ 9, Ը 3
0105/B11	Կենսաքիմիա 1	Մ 1, Մ 8, Մ 9, Ը 4
0105/B12	Կենսաքիմիա 2	Մ 1, Մ 7, Մ 8, Մ 9, Ը 4
0105/B13	Մանրէաբանություն և վիրուսաբանություն	Մ 1, Մ 2, Մ 5, Մ 7, Մ 9, Ը 3

0105/B14	Գենետիկա	Մ 1, Մ 4, Մ 7, Մ 8, Մ 9, Ը 4
0105/B15	Բույսերի ֆիզիոլոգիա	Մ 8, Մ 10, Մ 11, Ը 3
0105/B16	Կենսաֆիզիկա	Մ 6, Մ 7, Մ 8, Մ 9, Մ 10, Ը 3
0105/B18	Մարդու և կենդանիների ֆիզիոլոգիա 1	Մ 1, Մ 6, Մ 7, Մ 8, Ը 4, Ը 6
0105/B19	Մարդու և կենդանիների ֆիզիոլոգիա 2	Մ 1, Մ 6, Մ 7, Մ 8, Մ 9, Ը 4, Ը 6
0105/B20	Բնապահպանություն և շրջակա միջավայրի պահպանություն 1	Մ 2, Մ 11, Մ 12, Ը 4
0105/B21	Բնապահպանություն և շրջակա միջավայրի պահպանություն 2	Մ 2, Մ 11, Մ 12, Ը 6
0105/B22	Կենսատեխնոլոգիայի ներածություն	Մ 1, Մ 7, Ը 3
0105/B23	Էվոլյուցիոն տեսություն	Մ 1, Մ 7, Մ 8, Ը 2
0105/B24	Իմունոլոգիա	Մ 6, Մ 7, Մ 9, Ը 4
0105/B25	Կենսամետրիա	Մ 1, Մ 14, Ը 3
0105/B34	Կենսաաշխարհագրություն	Մ 2, Մ 12, Ը 6
0105/B27	Մոլեկուլային կենսաբանություն	Մ 1, Մ 7, Մ 9, Ը 3
0105/B28	Կենսաբանության դասավանդման մեթոդիկա 1	Մ 3, Մ 8, Ը 4, Ը 7
0105/B28	Կենսաբանության դասավանդման մեթոդիկա 2	Մ 3, Մ 7, Մ 8, Ը 4, Ը 7
0105/B28	Կենսաբանության խնդիրների լուծման մեթոդիկա	Մ 8, Մ 14, Ը 7
0105/B33	Կենդանիների համեմատական անատոմիա	Մ 2, Մ 4, Ը 6
0105/B81	Հատուկ դասընթաց կենդանաբանությունից	Մ 5, Ը 6

0105/B35	Հողագիտություն բուսաբուծության հիմունքներով	Մ 8, Մ 10, Ը 3
0105/ B77	Հատուկ դասընթաց մասնագիտությունից	Մ 1, Մ 4, Ը 2
0105/B36	Էկոլոգիական ֆիզիոլոգիա	Մ 6, Ը 3
0105/ B79	Հատուկ դասընթաց ֆիզիոլոգիայից	Մ 8, Ը 4
0105/B26	Ռադիոկենսաբանություն	Մ 7, Մ 13, Ը 3
0105 / B76	Կենսաբանական համակարգ, կազմակերպման մակարդակներ	Մ 8, Ը 2
0105/B32	Հիդրոկենսաբանություն	Մ 5, Մ 11, Ը 4
0105/ B80	Հատուկ դասընթաց ընդհանուր կենսաբանությունից	Մ 2, Մ 8, Ը 6
0105/B37	Նեյրոկենսաբանություն	Մ 1, Մ 6, Ը 3
0105/ B82	Հատուկ դասընթաց հոգեֆիզիոլոգիայից	Մ 7, Ը 2